

ՏՆՕՐԻՆ-ԼՍՐԱՆԳՐԱԳԵՏ

Հ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

ԲՆԵՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան	700 դր.
Վեցամսյ	350 "
Յամսայ	200 "
Սրբապատման արկ.	3 անգլ. ոսկի
Սանրիկա	7 ապար

Բաժանարկագրքի 66 կ'սկսի 66  
ամի 6 ամսոյ 1 և 15ի 6

100 ՓԱՐԱ



Fondateur  
M. MAMOURIAN

Directeur-Édacteur en chef  
H. MAMOURIAN

„Arévélian Mamoul,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

Օրաթերթ ազգային եւ փաղափական

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

(Մեր ժառանգը ինչպե՛ս)

Կ. Պոլիս, 26 Փետր. 1921

Այս միջոցին երբ բովանդակ Արեւելի ժողովուրդներու ուշադրութիւնը լծնտոն դարձած է և հոն հաւաքուած են Թուրք, Հիլլէն, Յոյն և Հայ գաւազան պատուիրակութիւններ, Արեւելի մեծ հարցին մասին իրենց տեսակէտները պարզելու աշխարհի հըզորներուն առեանին առջեւ, բնական է հետաքրքրական էր գիտնալ Արդարութեան և Իրաւունքի հզօր պաշտպաններուն առջեւ ազգերու կեդեքիչն ու հարստահարիչը հանդիսացող Թուրքերու ներկայացուցիչներուն որոնցմէ բաղկացած ըլլալը:

Այս տեսակէտով չափազանց շահագրգռական է Մուսթաֆա Քէմալի Միլլիական կառավարութեան պատուիրակներու նկարագիրը, որ իր հանգամանքովը շատ բնորոշ կերպով կը զծէ նաև Թրքական իսկական պատկերը:

Երեւակայեցէք, թէ Քէմալականք Լծնտոն կը զրկեն այնպիսի մարդիկ որոնք հազարաւոր մարդոց արեան պատասխանատուութեան տակ կը գտնուին:

Անոնց գլուխը կը գտնուի Պէքիր Սամի պէյ որ 1920 Յունիս ճին պատերազմական Ատանի վճռով մահուան դատապարտուած է և իբր Միլլիական շարժման գլխաւոր կազմակերպիչներէն մէկը նշանաւոր դեր կատարած է: Ինքն էր որ պահ մը իբր Միլլիականներու կողմէ Ինքիթիթ Բ. Իրան մէջ կը հակէր ներքին գործոց նախարարութեան գործառնութեանց վրայ:

Անատուրու խոյս տալէ յետոյ (Կ. Պոլսոյ գրաւումէն՝ 16 Մարտ 1920էն վերջ) եղաւ Մուսթաֆա Քէմալի կառավարութեան արտաքին գործոց նախարարը և Մոսկուա անձամբ երթալով Մոսկուայի սովիէթական կառավարութեան հետ կնքեց համաձայնութիւն մը և Լուկէս միլիոն հնչուն ոսկի ստանալով դարձաւ Էնկիւրի:

Արդարութեան համար ըսինք թէ Պէքիր Սամի տեղահանութեան միջոցին Հալէպի կուսակալ էր և չգործադրեց կեդրոնէն արուած այն հրամանները որոնց համաձայն Հալէպէն անցնող հայ տարագիրներու կարաւանները պէտք էր որ բնաջնջուէին: Եւ ասոր համար պաշտօնակն եղաւ և մինչև զինադադար Թօքատ ագարակ մը քաշուեցաւ:

Եթէ Հայոց դէմ չէ գործած սակայն Համաձայնութեան համար պէտք էր խորշիկ մէկը համարուած ըլլար: Իբր Միլլի շարժման գլխաւոր վարիչներէն մէկը:

Էր որ նահանգին տեղահանութիւնը ու ջարդը պատրաստեց, կազմելով լքեալ գոյքերու յանձնաժողովներ՝ որոնք կողպուտի գործերով պիտի զբաղէին՝ և կազմակերպելով չէթէախումբեր որոնք ճամբայ ելող կարաւանները սպաննելու կոչուած էին: Իր թելադրութեամբն էր որ 1915 Յուլի 8ին Էնկիւրի կուսակալ կարգուեցաւ Աթըք որ 28 տարեկան աղայ մըն էր և ուստիականապէս՝ Պէհեմետինը՝ 22 տարեկան սրիկայ մը:

Ինքն էր որ Սոզկատի Բեհեմետինը կարգել տուաւ Պողոս Նուպարի կարգի Քէմալը որուն գործադրած ջարդերը զինքն հուշակաւոր դարձուցին իբր «Գասապ Գայմապամ» և որ իր անկարողութիւն արարքներուն համար կախաղանի վրայ քաւեց իր մեղքը և ասով հերոսացաւ... յաջա Թուրք ազգայնականութեան... իբր մեծ մարտիրոս:

Բէճաթի էր որ նաև կազմակերպեց Չորումի ջարդը: 1920 Յունիս 12ին բացուած Իթթիհատական խորհրդարանին անդամակցեցաւ իբր Էրզրումի Բեհեմետին և փախաւ Էնկիւրի 16 Մարտ 1920ին՝ Կ. Պոլսոյ գրաւումէն յետոյ:

Այս կարգի նշանաւոր ոճրագործ մըն է նաև պատուիրակութեան մէկ ուրիշ անդամը՝ Միլլիէյման Սըրրի պէյը, նոյնպէս անդամ վերջին Միլլիական խորհրդարանին, իբր Նիկոմիդիոյ Բեհեմետին Անիկա առտոց ամբնալու 1920 Փետր 21ին ներկայացուց առաջարկ մը, իրեն պէս ուրիշ ջարդարար Բեհեմետներու հետ, որով կը պահանջէր պատերազմի ատեաններու ընկնելը անոնց հետապնդումէն ազատելու համար Այս մասին 8 Մարտ 1920ին սկսաւ վիճաբանութիւնը ու վերջ գտաւ անիկա 16 Մարտ 1920ին Դաշնակիցներուն կողմէ Կ. Պոլսոյ գրաւումով: Միլլիէյման Սըրրի զգալով որ պիտի ձերբակալուի փախաւ Անատուրու իր յանցապատուութեան փաստերը կը գտնուին պատատեանի թղթածրարներուն մէջ:

Պատուիրակութեան կը մասնակցի նաև Ջէքայի պէյ, որ 1915 Մայիս 13էն մինչև 15 Մայիս 1917 կը գտնուէր Կեսարիոյ կառավարչութեան պաշտօնին մէջ և իր հակողութեան տակ էր որ կատարուեցաւ Կեսարիոյ Հայոց տեղահանութիւնը ու կոտորածը: Կեսարիոյ և շրջանակներու 40000 հայերէն միայն 10000ը կրցան հասնիլ արարական անապատ և միւսները ջարդուեցան Ջէքայի պէյի միջոցաւ կազմակերպուած չէթէներու կողմէ:

Ինքն էր որ անձամբ հրկիզեց Չաթ զիւղաքաղաքը իր 2000ի չափ Հայ բնակչութեամբը: Նոյնպէս ինքն էր որ պաշարել տուաւ նաև Թալասի Աղջկանց Ամերիկեան վարժարանը և հոն գտնուած հայ աղջիկները ստնելով վից ամիս բանտարկելէ յետոյ խլամներու կողմէն տուաւ Կողպաեց նաև Ս. Կարապետի, Ս. Դանիէլի, Թումարայի վանքերը և քաղաքին և

ԷՆԳՅԵԼՔԻՆ ՄԵՑ

Չարմանալի չէ որ շատ բան գիտնալ ձեռնողները, ոչ ոքի խելքը չը հաւնողները և ինքզինքնին անվրայելի համարողներն են որ աշխարհիս մէջ ամենէ խոշոր սխալները, կափերը կ'գործեն:

«Վերջին Լուր» որ չէզոքութեան բերեղեայ պատուանդանին վրայ իր ինքնութիւնը կ'ցուցադրէ, անսբազրելի և ազադակող կափ մը կ'ընէ իր 1 Մարտ 2114 թիւով:

Կը հրատարակէ անցեալ Սեպտ. 9ին Բարիկէ ստացած թղթակցութիւն մը, որ Հայկական փոխառութեան փոտած ու մաշած հիմերու վրայ դրուած ըլլալուն մասին բացատրութիւններ կուտայ և Խատիսեանի ընթացքը կ'նկարագրէ և անոր ունեցած տեսակցութիւնները Պողոս Նուպարի և Նորատուկեանին հետ:

Մէկ խօսքով Պողոս Նուպար իր օժանդակութիւնը կ'զլանայ և կ'մերժէ Խատիսեանէ խնդրուած կոչը՝ հրաւիրելու (համար Հայերը մասնակցելու փոխառութեան, որովհետև Պողոս Նուպար Իսթանբուլէն չէր ուզեր ժողովուրդը խաբել:

Արդ՝ պիտի հարցնէք թէ այդ թղթակցութեան հրատարակութեամբ ու՞ր է «Վերջին Լուր» ըրած կափը: Հոտ եկաւ կարգը, սհաւասիկ:

«Վերջին Լուր» այդ թղթակցութեան վրայ հետեւալ տողերը կ'հրատարակէ որ իր յաւերժական գատապարտութիւնը պիտի ըլլայ:

«Հետեւեալ թղթակցութիւնը, զոր ժամանակին ստացած էինք, չէինք ուզած հրատարակել փոխառութեան գործին չլիսեալով դիտումով: Հիմա որ այլևս այս գործը իր ծանօթ փուլերուն մէջ կ'գտնուի, շահեկան կը գտնենք խնոր հրատարակութիւնը, ցոյց տալու համար մանաւանդ թէ ինչ կը մտածէր անոր մասին Ազգ. Պատուիրակութիւնը»:

Եղաւ լնցաւ չէ՞:

Եւ «Վերջին Լուր» ի խմբագրութիւնը այս վերել տողերով կ'ընդունի թէ այդ փոխառութիւնը անհաստատ հիմերու վրայ դրուած էր, թէ ժողովուրդը խաբելով դրամ առնելու վրայ կառուցուած փառութիւն մըն էր և ինք՝ իբրև ժողովուրդի շահերուն պաշտպան թերթ՝ կ'ընդունէր քոչարկել ճշմարտութիւնը, ծածկել բուն իրողութիւնը և թողուլ որ ժողովուրդը խաբուի իր այս ընթացքին ինչ անուն կ'տրուի...:

Եթէ այն ժամանակ համոզուած էր թէ փոխառութիւնը հաստատ հիմերու վրայ դրուած էր և զայն պաշտպանած, զոնէ այդ խմբագրական ծանօթութեան մէջ անհրաժեշտ էր որ բացէ ի բաց յայտարարէր սխալած ըլլալը, ինքզինք չբեկելու համար, իսկ եթէ փոխառութեան մեծագործը ոչ թրամները ընելով և Խատիսեանի ամեն արձակած ստութիւններուն չհաւատալով՝ գ'լուէր, կ'մեղանչէր չարաչար իր հրատարակագրի կոչումին և ժողովուրդի շահը ոտնակոխ կ'ընէր, զայն կ'խաբէր և տեղ կուտար իր թերթին մէջ քանի մը անհաւասարակ շիտ մտքերու, յարձակելու Ա. Մասնալի դէմ, անպատշաճ լեզուով մը այն միակ թերթին՝ որ աշխարհիս ամեն կողմ գտնուած գրիթէ բոլոր Հայ թերթերուն մէջ միայնակ չկրցաւ Խատիսեանի մը անմարտելի ստութիւնները տանիլ և բացարձակ արտայայտուեցաւ անոր դէմ, միևնոյն ժամանակ փոխառութիւնը՝ նուիրատուութիւն և հանգանակութիւն կոչելով:

Այսօր ո՞վ իրաւունք ունի և ո՞վ եղած է ժողովուրդի շահերուն ճշմարիտ պաշտպանը, թող դատէ այդ միևնոյն ժողովուրդը:

Իսկ Ա. Մասնալի վաղուց ներած է, «Վերջին Լուր» իր քննադատութիւնը հեղինակին իրեն լղէմ գրած ափեղջը փեղուցեանց, այս միևնոյն խնդրոյն առթիւ...:

85

Բեք եկեղեցիներուն գոյքերը ու հարստութիւնները:

Պատուիրակութեան մէջ կը գտնուէր նաև Տիրգանցի Չամի պէյ, որ Ափրիկ-Տրիպոլիոյ մէկուսն էր Իտալո-Թուրք պատերազմէն առաջ, իսկ, պատերազմի ատեն՝ Իզմիրի մէջ գրաքննութիւն կ'ընէր: Վերջին խորհրդարանին անդամ ընտրուեցաւ Այտընէն, և Կ. Պոլսոյ գրաւումէն յետոյ գնաց Մուսթաֆա Քէմալի քով:

Կը զարմանալք թէ կ'ընկերանայ պատուիրակութեան նաև Խուսրէվ պէյ (սպայակոյտի գնդապետ) Պոսնացի մը, որ Տրոպիզոնի Բեհեմետին էր վերջին խորհրդարանին մէջ և իր հակահամաձայնական քայլերովը նշանաւոր: Մասնաւորապէս նշանաւոր է իր այն Բարեբէր զոր 4 Մարտ 1920ին ներկայացուց խորհրդարանին, բողոքեալ համար Համաձայնական ինքնաշարժերու միջոց մարդիկ կոտորուելու համար:

Իսկ շատ աւելի զարմանալի է պատուիրակութեան մէջ գտնուիլը «Թափաքիթի Էփեքար» խմբագրուպետ Եօնուզ Նատրի որ Թուրքիոյ պատերազմին մտնելուն գլխաւոր քաջալի-

բողներէն մէկն էր և զպատերազմի տեղահանութեան իր գրած համաթուրանական, հակաքրիստոնեայ և հակաանգլիկական ու հակաֆրանսական յօդուածներովը նշանաւոր եղաւ թթիհատի գաղտնի վարկովը անիկա յետոյ հրատարակեց իր սեպհական «Մէնի-Կիւն» օրաթերթը որ Կ. Պոլսոյ գրաւումէն յետոյ, երբ ինքն անգլ. ոստիկանութեան ձեռքէն խոյս տալով Էնկիւրի գնաց, հոն Մուսթաֆա Քէմալի պաշտպանութեամբ վերստին հրատարակեց: Այս մարդոց շքախուսքը այսօր գացած է Լծնտոն և հոն արդարութեան և իրաւունքէն կը ճառէ, հոն անարդարութիւններ մատնանիչ կ'ընէ և զրկանքներու մասին կը խօսի:

Եւ կը գտնուին դատաւորներ... որ «հրոսպակետ» մը — բառը Պալֆուրինն է — արժանաւոր ներկայացուցիչները ըլլալու ամեն ձիրքերը իրենց վրայ մարմնացնող այս պատուիրակներուն արիւնաթաթառ ձեռքերը կ'ընդունին իրենց ձեռքերուն մէջ և անոնց հետ խորհուրդի կը նստին:

(Շարունակութիւնը կ'ընթացի 7. էջ)











# ԱՐԼԱՆԻՏ

Գ. Մ Ա Ս

ԴԵՊՈ 25.07 ԱՍԻՏԱՆԸ

Այսպէսով ուղեցին թէ միտնգամ ընդ միշտ փորձել զայն, և թէ՛ մըրցման մէջ գնել պաշտօնական արամադրութիւնները և իրենց մասնաւոր նպատակները Առտու մը Արքայալը զիս կանչել տուած էր և անհատակ թէ ինչպէս խօսեցաւ ինծի ի ներկայութեան Տօմ կոանկարի որ լուկեայն համակարծեթիւն կը յայտնէր:

« — Ձեր անգործութեան սրճաւ կուրոր 15 օրէն կը լրանայ: Քարիզ պիտի վերադառնաք և նախարարութեան պաշտօնի վերակոչուիլ պիտի խնդրէք: Այն ամենը զորս սորվեցաք այս տեղ և սպայակոյտին հետ ունեցած մեր կարգ մը յարաբերութիւնները, բաւական պիտի ըլլան որպէսզի ընդունուիք առանց դժուարութեան, բանակի աշխարհագրական գիւտնի մէջ: Երբոր հասնիք կըրնէլ փողոցը, պիտի ստանաք մեր հրահանգները:

« Ձարմացած էի, իրենց իմ վրայ ունեցած վատհաւթեան մասին: Երբ

որ աշխարհագրական գիւտնի մէջ հարկըրպիտի աստիճանս վերաացայ, այն ատեն է որ հասցայ բանին էութիւնը վանքին մէջ Տօմ կրանկարի և իր ասոյեաններուն յաճախումը զիս շարունակական համոզման մէջ կը պահէին իմ ծանօթութիւններու անգործութեան մասին: Ընկերակիցներուս հետ շփման մէջ մտնելով, հասցայ հոտ ստացած ուսումնաբիտ գիտակցութիւնը իմ առաջընթացութեան մանրամասնութիւններով զբաղելու անգամ պէտք չտեսայ: Նախարարութիւններու կողմէ եկան ինքնուրու որ զայն ընդունիմ: Նախաձեռնութիւնս այս բանին մէջ մէկ ասիթով մը միայն ի գործ դրի: Եւսացած ըլլալով որ Արքայալէն պիտի մեկնիք այս ձեռնարկութիւնը կատարելու համար, և ըստ բաւակարգի չի վստահելով իմ գործնական հետախոյզի կարողութեանս վրայ, զիմում ըրի ձեր մեկնումը ուշացնելու համար որպէսզի կարենամ ձեզի ընկերակցել: Կը յուսամ թէ այլեւս չէք մեղադրեր զիս այս մասին:»

Լոյսը կ'ոկսեր խոյս տալ դէպի Արեւմուտք ուր արեւը մանիչակազայն շարժներով պարուրուած յամբար կ'ընկղմէր: Մինակ էինք այդ անհունութեան մէջ, կարծր ու սև փայտերու ստորտը: Մեզմէ զատ

ոչինչ կը լուսի ոսկեղօծ անապատին մէջ:

Մէկ ձեռքս կերկարիմ Մօրհանձի զոր կ'սեղմէ ամուր մը և յետոյ կ'օկսի:

« Եթէ երբէք, անհունապէս երկար կերեւին ինծի այն քանի մը հարկըր քիլոմէթրները, որոնք զիս կը բաժնին այն բոլորէն, ուր աշխատութիւնս լրացուցած, պիտի կրնամ վերադառնալ կղերանոց, մտնելու համար այն ամենը որոց համար ըսել տեղեւած չէի ես: Թող սուէք ըսի ձեզի թէ, այս ժամուս անհուն օրէն կարճ կերեւին ինծի այն քանի մը հարկըր քիլոմէթրները, որոնք կը մնան հասնելէ առաջ Շայխ-Սալան, ձեր ընկերակցութիւնը վտայելու համար:»

Փոքրիկ առուակին տփոյն շուրին վրայ, ործաթ բեւեռի մը պէս, անշարժ և ուղիղ, աստղիկ մը կը ծնէր:

« Շայխ-Սալան, մրմնջեցի, սիրտս անասելի արտութեամբ մը համակուած. համարութիւնս Դեռ հոն չենք հասած:

Իրապէս երբէք չպիտի կրնայինք հասնիլ հոն:

Ե. Մ Ա Ս

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Իր երկարատև գաղութանին մէջ հարուածով Մօրհանձ Ժայռի կտոր մը փրցուց ըրան սեւաթոյր կողէն:

« Ինչ է այս, հարցուց զայն ինծի երկարելով:

« Ձիթաքարի պաղաթ մը, ըսի:

« Կարեւորութեան զուրկ է. ակնարկ մը իսկ չի նետեցիք վրան:

« Ընդհակառակը, չափազանց շահադրական է: Բայց առայժմ պէտք է խոստովանիմ թէ բոլորովին ուրիշ բաներով զբաղած է միտքս:

« Ինչ բանով:

« Դիտեցէք քիչ մը այս կողմ, ըսի իրեն, ցոյց տալով դէպի արևմուտք հորիզոնին վրայ. միաստուեր կէտ մը, սպիտակ լեռնադաշտին միւս կողմը:

Առաւօտեան ժամը վեցն էր: Արևը ծագած էր արդէն. բայց ի զուր կը փնտռէինք զայն զարմանալիօրէն ազորի երկնքին վրայ: Օդի ոչ մէկ շունչ կըզգայինք:

Յանկարծ մեր ուղտերէն մին խուլ հեծեմուն մը արձակեց: Խոյր յամայր մը ստոււով մը կերթար զընթաց զարնել ժեռուտ պատէշին: Ու հոն կը մնար ապուշ կրթած, մեզմէ քանի մը քայլ անդին, իր նուրբ սրունքներուն վրայ դողդողալով:

(Շարունակելի)

Եւ դեռ միամիտ մարդկութիւնը կ'սպասէ թէ հզօրները արգարութիւն պիտի հաստատեն աշխարհի վրայ:

Վա՛յ միամիտներուն և վա՛յ հաւատացողներուն:

## ԱՐԳԱՍ ԱՆԳԵՂԱՑԻ

Յ. Գ. Յուլիով և միանգամայն մեծ զարմանքով «Վերջին Լուր»-ի 2106 թիւին մէջ կարդացի Պ. Երուանդ Օտեանի իմ մասին գրած մի քանի տողերը: Պ. Երուանդ Օտեանի ո՛վ զիտէ ինչո՞ւ է պիլիղաթեանի ծանօթ խնդրոյն առթիւ իր հրապարակ գրած իրողութիւնը կամաց մը յետս կը կոչէ յայտնելով թէ Պ. Էպիլիղաթեանի անունը չէ յիշած իր օրէն մէկ գրութեան մէջ և ասոր համար չվարանիր բանելու թէ ես բաց է ի բաց կը խեղաթելեմ իրողութիւնը:

Մաշտոցի նահանգի հեղինակը, Ճակատարի Առաջադրութեան և Վերջին Լուրի՝ Իրջնաան Կոնստանտին հեղինակը, Իգնատիան կուսակցութեան և Հայ խմբագրաց միութեան Առեւտրայեան, Պէյքօղ—Ղալաթիա թաղերուն երեսփոխանը (ուշադրութիւն ըրէք, Երուանդ Օտեան անունը չի տրուի) կ'երկայ թէ վերջերս ցոյց կուտայ յիշագրութեան տկարութիւններ—ինչպէս տեսնուեցաւ Պ. Սահակ Մեսրոպի հետ իր վիճաբանութեան միջոցին և կը մտնայ իր գրածները կամ չունի հրապարակագրէ մը պահանջուած տարբերակ քաղաքացիական քաղութիւնը անոնց պատասխանատուութիւնը տանելու համար վիճանաձօրէն:

Կը հարցնեմ Պ. Յ. Օտեանի թէ Վերջին Լուրի (8րդ տարի թ. 2078) 17 Յունվար 1921 թուին մէջ «Գալիպոլի»-ի մէջ վերահարող և իրմէն ստորագրուած հատուածին հերոսը ո՞վ էր:

Ո՞վ էր «մեր հանրային գործիչներէն մէկը, որ ազգային կարևոր պաշտօն մը կը վարէ (ամսականաւոր), ամուսնացած և զաւակներու տէր»: որ «վերջերս կը հետապնդէ 18—19 տարեկան օրիորդ մը ոչ նոյնպէս կը պաշտօնավարէ ազգային հաստատութեան մը մէջ իբրև տաքտիլօկրաֆ»: Շարունակութեան պէտք չունին:

Հրապարակագրի պարկեշտութեան անունով ձեռքէ կը պահանջեմ որ այդ անունը հրապարակէք եթէ քաղութիւն ունիք և եթէ չարամիտ ակնարկութիւններով և խեղաթիւրումներով հանրութիւնը մոլորեցնող մը չէք:

Պարկեշտ հրապարակագրի գործ չէ ձեր ուրացումը:

Դո՛ք որ երկար տարիներու անցեալ մը ունիք Ձեր կոնակը մի տաք օրինակը այսպէս լի վատաստութեան մը:

Գրեցիք, ստանձնեցէք պատասխանատուութիւնը:

Ասիկա ձեզի անարժանաբար խըրատու:

Յետոյ հարցում մը ևս:

Ինչո՞ւ միայն այդ հերքումը իմ գրածիս և ոչ այն բազմութիւն անունով, տեղով, և մանրամասնութեամբ հրատարակութիւններու, որոնք ձեր քիթին տակ, Կ. Պոլսոյ մէջ գրուեցան, ամենքն ալ ձեր գրածէն յետոյ: Կրնա՞ք այս մասին բացատրութիւն մը տալ:

Ա. Ա.

## ՂԵՒՈՆՂԵԱՆՑ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Ղեւոնդեանց քահանայից տուած խըմբուրութեան առթիւ Առաջնորդարանի մէջ ի գիմաց Իզմիրի քահանայ հայրերուն հետեւելու ուղերձը կարդացած է Արժ. Տ. Գոթրիէլ քեյ. Պաշտօնաւորան:

Մ. Խ.

### Գերապատիւ Սրբազան Հայր և Արժ. Ս. Հարթ

Տասն և վեց դարերէ յետոյ՝ նորէն կը համախմբուիք սօնելու համար մեր ամենէն նուիրական Սրանելի Ս. Հայրերուն, Ղեւոնդեանց Քահանայից հանդիսաւոր սօնը:

Եւ կը շնչուիմ թէ, իրապէս երանելի եղած են անոնք որ իրենց և տեւէն սահած 1500 երկար տարիներ չեն կրցած պատմութեան էջերէն սըրբիկ մաքրել անհետացնել անոնց սուրբ ու նուիրական անունը: Եւ մտածել թէ, ինչ մեծ շնորհ մըն է այն վարձատրութիւնը ու սպարգեւը յաւիտեանական որ տրուած է անոնց Աստուծմէ, և ինչ ահազին ուժ մըն է անոնց հաւատոյ զսպանակին լուսարձակը որոյ լոյսը չը մարիր երբէք և որ տարիներուն բարդուելով իսկ իրենց Հայ զաւակներուն սրտերուն մէջ նոր ի նորոյ կը բորբոքէ իւր հաւատքին ու հայրենեաց սէրն ու հուրը:

Եւ ինչ էր անոնց ոյժն ու շնորհը զոր մենք կը փափագիմք ունենալ այսօր:

Անոնք ունէին՝ անասան հաստատուն հաւատք մը ամրապինդ յուսով կերտուած ու անկեղծ ու անհնազ սիրով զարդարուած ու յարգարուած որով կարողացան հայութիւն մը բընաջնջումէ ազատել՝ Մողղենից պիղծ աղանդին հոսանքէն:»

Անոնք, Քրիստոսուանդ Հայ հաւատքին ու անարատ ամբի կըրօնքին սիրոյն համար, որ պեռ նոր հաստատուած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչէն, Միծն Ներսէս ու Սահակ

Մեսրոպիաներէն, ի սպաս դրին իրենց անձը՝ նոյնիսկ իրենց արիւնը:

Անոնք նոյնիսկ իրենց փառաւոր ու աննման նահատակութեանէն յետոյ ալ վառ պահել տուին իրենց հաւատքին հուրը հայ Ժողովուրդին մէջ, իրենք մեռան թէև, բայց իրենց մահուամբ ապրեցուցին Հայ ազգը. որով իրենց անունն ալ անմահացուցին:»

Եւ երանի՛ էր մեզ, եղբայրներ, եթէ անոնց ամենադոյզն քաջագործութիւնը ունենայինք զէթ պաշտպանելու ու պահպանելու համար այն Սրանելի՛ Հայրերուն մեզի աւանդ ձգած Հայ Եկեղեցին, որ հայ Ժողովուրդը ինքն իսկ է:

Անահ, անվկանդ, հրաբորբը Ղեւոնդեանց Արմենալանջ և Պաշալանջ Քահանայից զիւցազանխոսմբը որ Աջով ու Պաշով կը բորբոքէր Հայկական բանակին անվեհեր զօրքերը, ցայսօր իբր մտատիպար ծառայած է խաչաչարչար բայց յաղթական Հայ սիրելի ազնիւ Ազգիս, և ինչ որ ալ ըլլան քաղաքական ներկայ արարողութիւնները կը թող ներուի մեզի այն հաստատ հաւատքը ունենալ թէ, միշտ մեր ձեռքովը պիտի քաշենք Հայ Քահանաներս Հայ Անկախութեան ազատաձալ դրօշը ու պիտի բենք մեր ոչ—անկեղծ բարեկամ հարեաններուն. մենք հայ ենք, մենք միշտ կը յաղթենք, մենք մահին անգամ յաղթեցինք:»

Սրբազան Հայր, Ձեր բարձր սըրբազանութեան անուան տօնին առթիւ՝ մեր սրտագին մաղթանքները բանիւ բերանոյ կրկնելով կը փափագիմք անկեղծ սրտէ զի հաճեցի Տէր շնորհել Ձեզ մինչև ցիտը ձերութիւն բարձր ունել զգալիստն հովուական և լինել պաշտպան իրաւանց Հայաստանեայց ամենամաքուր Ս. Եկեղեցւոյ և Հայ ազգիս զլիսիին:

Տ. ԳԱՐԻԷԼ ՔԷՅ. ՊԱՏԱՍՏՈՒԹԱՆ

## Ազգային Անցուղարձ

Քաղաքական ժողովը իր սովորական նիստը գումարեց Ձորեքաթի օր, նախագահութեամբ Առաջնորդ Ս. Հօր Ներկայ էին Պ. Պ. Ն. Ներսէսեան, Բ. Կիւլպէնկեան, Գ. Փափազեան և Մ. Գոճամանեան:

Ուշաքի քահանայութեան և թաղականութեան հասած կրկնակ գրութիւնները նկատի առնուելով, որոշուեցաւ հրահանգ տալ, որ մինչև զարոցական ներկայ տարեշրջանի աւարտումը, առժամայ թաղականութիւնը շարունակէ իր պաշտօնը կարողացեցաւ Մանչեսթրի Ազգային Ընդ-

հանուր Ժողովոյ գիւտնի կողմէ ուղղուած գրութիւն մը որ կը յայտնէր Մարդուանցի Կարապետ Քիրէ-միտեանի մասին իր կողմէ հղած բարոյական և ներթափանտ տնօրինութիւնները Ժողովը վաւերացուց Պերկամայի նորընտք թաղականութիւնը, որու կանգամակցին՝ Պ. Պ. Ս. Փափազեան, Գ. Գոսպարեան, Թ. Պալապանեան և Գ. Գոլյուսմեան: Տիւնէր աքսոր գտնուող Մշեցի Ղաղարոսի կողմէ յայտնուած փափաքին վրայ, իր հոս ունեցած գոյքերուն պաշտպանութեան համար պէտք եղած միջոցները ձեռք առնել որոշուեցաւ Ժողովը ի վերջոյ զբաղեցու կարգ մը անհատական խնդիրներով:

« Հայ Ակումբի վարչութիւնը կը սարքէ այս վերջեր ժամը 9ին ընտանեկան պարտնիկ երկկոյթ մը՝ ակումբի շէնքին մէջ:

## Ա Ձ Գ

Իզմիրի Ձին. 2րդ հիւանդանոցը կը ծանուցանէ թէ՛ նուազուրդի դրուած են 3 ամուսան համար բունջարեղէնի և նպարեղէնի տեսակները:

Նուազուրդը տեղի պիտի ունենայ յառաջիկայ ուրբաթ օր 5)15 Մարտ 1921 ժամը 10—12 կ.ա.:

Այս նուազուրդի պայմաններուն տեղեկանալ փայլաքոյք կրնանամէն օր մեր գրասենականները ներկայանալ ժամը 10—12 կ.ա.:

Իզմիր 11 Մարտ 1921

Տնօրէն ՍԻՐ. ՎԱՍԻԼԻՈՒ

Իզմիրի Ձին. 2րդ հիւանդանոցը կը ծանուցանէ թէ՛ նուազուրդի դրուած է ճերմակեղէններու և սաւաններու լուսացը:

Նուազուրդը տեղի պիտի ունենայ յառաջիկայ ուրբաթաթի օր 3)16 Մարտ 1921 ժամը 10—12 կ.ա.:

Պայմաններուն տեղեկանալ փափաքողք կրնան ամէն օր մեր գրասենականները ներկայանալ ժամը 10—12 կ.ա.:

Իզմիր 11 Մարտ 1921

Տնօրէն ՍԻՐ. ՎԱՍԻԼԻՈՒ

(Բժշկագետ)

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ՄՈՒՇԵՆԱ ԱՐՁԱՆԱՅԻՆՆԵՐ

ՄՂԱՄԱՆՁԸ 100 դր.

ԲԱՆԱԾՍՈՒԹԻՒՆՆԵՐ 100 »

ԱՐՄԷՆԻԱ և ՀԱՅԱՍՏԱՆ 30 »

Մնացած են քանի մը օրինակներ փափաքողք թող դիմեն «ՁԱՐԹՍԻՔ» գրատունը: